

**Շրջակա միջավայրի նախարարության
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող
պարոն Ա.Խաչատրյանին**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի/ծառայողների անունը, ազգանունը և գրաղեցրած պաշտոնը

Նարինե Հակոբյան (հողերի և ընդերքի քաղաքականության վարչության պետի տեղակալ):

2. Գործուղման վայրը ժամկետները

Շվեյցարիայի Համադաշնություն, քաղաք Ժնև, 2023 թվականի սեպտեմբերի 6-8:

3. Հրավիրող կողմը

ՄԱԿ-ի Բնապահպանական Անսամբլայի (UNEA) քարտուղարություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հանքարդյունաբերության դերը վճռորոշ է գլոբալ մաքուր էներգիայի շարունակական անցման համար՝ որպես հանքանյութերի և մետաղների մատակարարման ոլորտ: Էներգետիկայի միջազգային գործակալության (IEA) համաձայն՝ կլիմայի փոփոխության վերաբերյալ Փարիզյան համաձայնագրի նպատակներին հասնելու համար մաքուր էներգետիկ տեխնոլոգիաների ներդրումը կմեծացնի հանքանյութերի պահանջը մինչև 2040թ., նույնիսկ մինչև 2050 թվականը ամբողջական գլոբալ անցմանը հասնելու համար վեց անգամ ավելի շատ օգտակար հանածոների ներդրում կպահանջվի, քան այսօր: Իր հերթին ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը (UNEP) կանխատեսում է, մինչև 2035 թվականը օգտակար հանածոների արտադրության քանակատիկ աճ:

Գիտակցելով հանքարդյունաբերության նման աճի հսկայական բնապահպանական հետևանքները՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլայի (UNEA 5) հինգերորդ նստաշրջանը հանձնարարեց գործընթաց՝ ստեղծելու «ոչ պարտադիր առաջարկներ» (Non-prescriptive proposals-NPP)՝ գործող լուծումների համադրմամբ՝ միներալների ողջ կյանքի ցիկլի համար: Գլոբալ հանդիպման

արդյունքում ձևավորված առաջարկները կքննարկվեն UNEA 6-ում 2024 թվականի փետրվարին:

5. Քննարկված թեմաները

UNEA-ի կողմից հանձնարարված գործընթացը իրականացավ 2 փուլով՝ 2023թվականի ապրիլ ամսին կայացած 5 տարածաշրջանային խորհրդակցություններով և սեպտեմբերի 7-8-ը՝ գլոբալ հանդիպման ամբողջական քննարկումներով, ինչի արդյունքում ձևավորվեց 24 նախնական ոչ պարտադիր առաջարկ:

Նիստում քննարկված հարցերի թվում պատվիրակները քննարկեցին, թե ինչպես.

- իրականացնել գոյություն ունեցող գործիքների և չափորոշիչների գլոբալ գնահատում՝ UNEP-ի կողմից.
- ստեղծել մետաղների հավաստագրման միջազգային սխեմաներ.
- խթանել կայուն սպառումը և արտադրությունը (SCP)՝ շրջանաձև տնտեսության և արտադրողի ընդլայնված պատասխանատվության (EPR) միջոցով.
- մշակել պոչամբարների կառավարման տեխնիկական ուղեցույցներ և ստանդարտներ.
- ընդունել ուղեցույցներ հանքի փակման համար.
- ստեղծել նոր միջկառավարական աշխատանքային խումբ, որը կհետևի գլոբալ միջկառավարական հանդիպման(GIMM) ընթացքում ներկայացված ցանկացած առաջարկի իրականացման ընթացքին, օրինակ՝ «Օգտակար հանածոների գլոբալ ծրագիր».
- կնքել հանքարդյունաբերության բնապահպանական ասպեկտների վերաբերյալ միջազգային համաձայնագիր:

6. Հանդիպումները, ելույթները.

Բացման խոսքով հանդես եկան համանախագահներ Մարտին Ռոն-Բրոսսարդը (Շվեյցարիայի ՇՄՆ) և Շեյլա Ազգարվալ-Խանը (UNEP), կարևորելով հանքարդյունաբերության ծավալների աճին զուգընթաց բնապահպանական ազդեցությունները դիտարկելու և դրանց լուծման անհրաժեշտությունը՝ մատնանշելով, թե ինչպես հանքարդյունաբերության շուրջ սոցիալական հակամարտությունների սառեցումը և օգտակար հանածոների և մետաղների արժեքի կայուն կառավարումը կարող են նվազեցնել հանքաքարի արդյունահանման անհրաժեշտությունը:

Տեղի ունեցան պանելային քննարկումներ՝ լքված հանքավայրերի և պոչամբարների գույքագրման, օրենսդրական բացերի և ապօրինի հանքարդյունաբերության նվազեցմանն ուղղված քայլերի վերաբերյալ:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Գլոբալ հանդիպմանը մասնակցում էին պատվիրակներ 120 երկրների կառավարություններից և 60 դիտորդ կազմակերպություն, ներառյալ ՄԱԿ-ի գործակալությունները և այլ միջկառավարական մարմինները, բնապահպանական բազմակողմ համաձայնագրերի քարտուղարությունները և հասարակական կազմակերպությունները: Հանդիպման մասնակիցները բաժանվեցին երեք ոչ ֆորմալ խմբերի՝ քննարկելու ձևավորված «ոչ պարտադիր առաջարկները»՝ խմբավորված 3 ոլորտներում՝ ա) քաղաքականություն և գործիքներ; բ) արժեշղթաներ; գ) միջազգային համագործակցության հարթակներ: Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին հնարավորություն տրվեց ֆիլիպինցի գործընկերոջ հետ վարել միջազգային համագործակցության հարթակը: Քննարկվեց հնարավոր համագործակցության շրջանակը տարբեր առնչվող կոնվենցիաների և համաձայնագրերի միջև: 3 թեմատիկ խմբերում ձևավորված ամփոփ կարծիքները ներկայացվեցին համանախագահողներին: Համանախագահները ամփոփեցին հանդիպման արդյունքները՝ ամրագրելով անհրաժեշտություն՝

- զարգացող երկրներին տրամադրել տեխնիկական աջակցություն, ֆինանսական աջակցություն և նորարարական տեխնոլոգիաների փոխանցում.
- խուսափել ներդրվող ջանքերի կրկնությունից և փոխարենը հնարավորություններ փնտրել առկա գործիքներն օգտագործելու համար.
- ապահովել թափանցիկություն և տեղեկատվության հասանելիություն օգտակար հանածոների և մետաղների կյանքի ողջ ցիկլի ընթացքում.
- ապահովել համայնքի բովանդակալից ներգրավվածություն հանքարդյունաբերության բոլոր գործընթացներում.
- կենտրոնանալ վերականգնվող էներգիայի ընդլայնման վրա հանքարդյունաբերության մեջ և ամբողջ արժեքային շղթայում.
- դիտարկել հանքարդյունաբերության բնապահպանական ասպեկտների հատումը մարդու իրավունքների, սոցիալական խնդիրների և կլիմայի փոփոխության հետ.
- լուծել «լեգիտիմության ճգնաժամը», որը բախվում է հանքարդյունաբերության ոլորտին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Թեև հանքարդյունաբերության բնապահպանական ասպեկտների վերաբերյալ միջազգային համաձայնագրի ուսումնասիրման հայեցակարգը այս փուլում համարվում է վաղաժամ, պատվիրակները հետաքրքրություն հայտնեցին առկա գործիքների և հանքարդյունաբերության ստանդարտների գլոբալ գնահատման, կարողությունների զարգացման և տեխնիկական աջակցության

ավելի մեծ ջանքերի և շինանյութ հանդիսացող հանքանյութերի համաշխարհային
հետազոտական կենտրոնի ստեղծման նկատմամբ:

Գլոբալ հանդիպման արդյունքում ձևավորված առաջարկները կքննարկվեն
UNEA 6-ում 2024 թվականի փետրվարին:

Գործուղվող՝



Նարինե Հակոբյան

9/13/2023թ.